

**ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ. ԱՆԽՈՆՋ ԲԱՆԱՀԱՎԱՔ-ԲԱՆԱԳԵՏԸ  
(ծննդյան 90-ամյակի առթիվ)**



ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանագիտության բաժնի առաջատար գիտաշխատող, անվանի բանահավաք և բանագետ, ք.գ.դ., պրոֆեսոր Վերժինե Գառնիկի Սվազլյանը 2024 թ. մարտի 1-ին բոլորեց իր 90-ամյա հոբելյանը: Վ. Սվազլյանը հեղինակ է 500-ից ավելի գիտական և հրապարակախոսական հոդվածների, շուրջ 30 գրքերի, որոնք տարբեր լեզուներով լույս են տեսել Հայաստանում և արտերկրում: Գիտությանն իր անմնացորդ նվիրման և անխնջ աշխատանքի համար

Վ. Սվազլյանը 2016 թ. ստացել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում: Բազմավաստակ գիտնականն արժանացել է հայրենի և արտերկրի ավելի քան երեք տասնյակ պարգևների, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության ուսումնասիրության գործում նշանակալից ավանդ ներդնելու համար ՀՀ նախագահի Առաջին մրցանակի և «Ոսկե հուշամեդալի» (2006), «Մովսես Խորենացի» մեդալի (2013) և այլն:

Հայրենիքում և Սփյուռքում Վերժինե Սվազլյանը հատկապես հայտնի է Հայոց ցեղասպանության ականատես վերապրողների բանավոր վկայությունները գրառելու և հրատարակելու իր անդուլ գործունեությամբ: Հայոց ցեղասպանության վերաբերյալ նրա աշխատությունները թարգմանվել ու հրատարակվել են ոչ միայն Հայաստանում, այլև արտերկրում՝ անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն, թուրքերեն, իսպաներեն, հինդի, չեխերեն և այլ լեզուներով: Որպես բանագետ՝ նա հետազոտական նոր աստիճանի է բարձրացրել հուշապատում ժանրի գիտական ուսումնասիրությունը՝ դառնալով վիպական բանահյուսության այս տեսակը խորությամբ հետազոտած բարձրակարգ մասնագետ:

**Վերժինե Սվազլյանը** ծնվել է 1934 թ. մարտի 1-ին Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում: Հայրը՝ գրող և հասարակական գործիչ Գառնիկ Սվազլյանը, մեծապես նպաստել է դստեր հոգեգիտակցական աշխարհի ձևավորմանը: 1947 թ. Վ. Սվազլյանը 13 տարեկան էր, երբ ընտանիքով ներգաղթել են ՀԽՍՀ: Տակավին դպրոցական տարիներից Վ. Սվազլյանի նպատակն է եղել իրականացնել իր արժանահիշատակ հոր պատգամը. «...Պատիվ բերես քո ծնողքին և քո ազգին, Հայրենիքին»:

1952 թ. ընդունվել է Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական բաժին, որը գերազանցությամբ ավարտել է 1956 թ.: Այնուհետև որոշ ժամանակ՝ 1956-1958 թթ. հայոց լեզու և հայ գրականություն է դասավանդել Երևանի Խ. 52 միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում: Մանկավարժական գործունեության հետ միաժամանակ նա «Սովետական Հայաստան» ամսագրի և այլ պարբերականների էջերում, ինչպես և ռադիոյով, հետազայում նաև՝ հեռուստատեսությամբ, ներկայացրել է հայրենիքում հանգրվանած հայրենադարձների կյանքն ու կենցաղը, նրանց աշխատանքային, կրթական ու մասնագիտական հաջողությունները:

Այդուհանդերձ, նորավարտ Վերժինեին գրավում էր հետազոտական աշխատանքը: 1958 թ. նա սկսել է աշխատել ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ ժողովրդական բանահյուսության բաժնում՝ որպես լաբորանտ: Միաժամանակ, 1958-1961 թթ. ուսումը շարունակել է ԳԱ ասպիրանտուրայում՝ «Հայ ժողովրդական բանահյուսություն» մասնագիտությամբ: Ասպիրանտական ուսումնառության ընթացքում Վ. Սվազյանը եղել է Մ. Աբեղյանի անվան թոշակառու:

Անվանի արևելագետ-բանագետ, ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանը, ծանոթանալով երիտասարդ բանահավաքի նորահայտ բանահյուսական նյութերին՝ գրանցված Մուսա-լեռան խրթին բարբառով և տառադարձված բարբառագիտական ճշգրտությամբ, մեծապես գնահատեց սկսնակ հետազոտողի պրպտուն և բարեխիղճ աշխատանքը և ստանձնեց նրա գիտական ղեկավարությունը՝ առաջարկելով ուսումնասիրել XIX դարի երախտաշատ բանահավաք, ազգագրագետ **Սարգիս Հայկունու կյանքն ու գործը**: Վ. Սվազյանը սիրով ուսումնասիրել է Հայկունու անմշակ արխիվային նյութերը և 1965 թ. հաջողությամբ պաշտպանել թեկնածուական ատենախոսությունը: Այդ գիտական ուսումնասիրությունը լույս է տեսել Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակած «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի 4-րդ հատորում (1973 թ.):

1959 թ. ՀՀ ԳԱԱ կազմում հիմնադրվել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտը, իսկ 1960 թ. Գրականության ինստիտուտից այդտեղ է տեղափոխվել հայ ժողովրդական բանահյուսության բաժինը: Այս նորակազմ բաժնում Վ. Սվազյանն աշխատել է ավելի քան 10 տարի՝ որպես կրտսեր գիտաշխատող, ապա 1972 թվականից փոխադրվել է նորաստեղծ բանահյուսական սկզբնաղբյուրների վավերագրման բաժին (ղեկավար՝ Ս.Բ. Հարությունյան)՝ որպես ավագ գիտաշխատող: 1995 թվականից առ այսօր Վ. Սվազյանն աշխատում է անվանափոխված բանահյուսության տեսության և պատմության բաժնում (2024 թվականից՝ բանագիտության բաժին)՝ որպես առաջատար գիտաշխատող: Երբ Հայաստանի անկախացումից հետո հիմնադրվել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը, Վ. Սվազյանը հրավիրվել և որոշ ժամանակ (1996-2004 թթ.) համատեղությամբ աշխատել է նաև այդտեղ՝ միաժամանակ ընդգրկված լինելով ՀՅԹԻ գիտական խորհրդում:

Վ. Սվազյանը 1965 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1995 թ.՝ դոկտորական թեզերը, 1996-2018 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության, ինչպես նաև Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտներում գործող մասնագիտական խորհուրդների անդամ: Մասնակցել է հանրապետական և միջազգային մի շարք գիտաժողովների, ինչպես նաև զեկուցել սփյուռքահայ տարբեր կազմակերպություններում (ՌԴ, Հունաստան, Ֆրանսիա, Ավստրիա, Գերմանիա, ԱՄՆ, Կանադա, Լիբանան, Սիրիա, Եգիպտոս, Թուրքիա)՝ ներկայացնելով բանագիտությանը, ժողովրդագիտությանը, ցեղասպանագիտությանը և հայոց պատմական հիշողությանն առնչվող թեմաներ:

Սկսած 1955 թվականից՝ Վերժինե Սվազյանն ավելի քան 65 տարիների ընթացքում անձնական նախաձեռնությամբ, ինքնամոռաց նվիրումով, ուղքով անցել է թաղից թաղ, գյուղից գյուղ և ծայնագրել, տեսագրել, վերականգնել, ուսումնասիրել ու հրատարակել Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Փոքր Ասիայի հայության բանավոր մշակույթը՝ բանավոր պատմություններ, ավանդազրույցներ, ժողովրդական երգեր և այլ բանահյուսական նշխարներ: Վ. Սվազյանի բանասացները եղել են իրենց բնօրրանի ավելի քան 150 տեղավայրերից բռնի տեղահանված, ապա Հայաստանում և Սփյուռքում բնակություն հաստատած՝ Հայոց ցեղասպանության ականատես վերապրողներն ու նրանց ժառանգները, որոնք հաղորդել են նաև փաստավավերագրական մեծ արժեք ներկայացնող հուշ-վկայություններ, զրույց-վկայություններ և երգ-վկայություններ: Այդ աշխատանքի ընթացքում Վ. Սվազյանն աչքաթող չի արել նաև թուրքախոս հայերի բանավոր մշակույթը:

Վ. Սվազյանի պատմագիտական գրառումներից ցեղասպանագիտության ասպարեզում փաստագրական բացառիկ արժեք են ներկայացնում դերգորյան թուրքալեզու երգերը, որոնք հեղինակը դժվարությամբ հայտնաբերել, գրառել, թարգմանել և ուսումնասիրել է իր **«Մեծ եղեռնը արևմտահայոց հուշապատմությունում և թուրքալեզու երգերում»** (Եր. 1997, 1999, հայերեն, ռուսերեն, անգլերեն, իսկ թուրքերենը՝ Ստամբուլ 2005): Բացի այդ, հրատարակել է **«Հայոց ցեղասպանությունը և ժողովրդի պատմական հիշողությունը»** (հայ.՝ Եր. 2003, անգլ.՝ Եր. 2004, 2005, ֆրանս., գերմ., ռուս., թուրք.՝ Ստամբուլ 2005) մենագրական աշխատությունը: Վ. Սվազյանը նաև Հայաստանին ու հայ բանահյուսությանը նվիրված ծավալուն հոդվածներ է հեղինակել արտերկրի մի շարք հանրագիտարանների համար:

Արժանահիշատակ են Վերժինե Սվազյանի **«Մուսա Լեռ»** (Եր. 1984), **«Կիլիկիա. արևմտահայոց բանավոր ավանդությունը»** (Եր. 1994), **«Մեծ եղեռն. արևմտահայոց բանավոր վկայություններ»** (Եր. 1995), **«Պոլսահայոց բանահիսութիւնը»** (Եր. 2000), **«Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ»** (Եր. 2000, նաև՝ երկրորդ համալրված հրատարակությունը՝ Եր. 2011, հայ. և անգլ., թուրք.՝ Ստամբուլ 2013), **«Մուսա Լեռնան հերոսամարտը. ականատես վերապրողների վկայություններ»** (հայ., անգլ., Եր. 2015), **«Ռուսաստանի հայերի բանավոր ավանդույթի նշխարներ (Դոնի**

**Ռոստով և Պյատիգորսկ)»,** հայ., ռուս., անգլ.<sup>1</sup> Եր. 2020), **«Ամերիկահայոց բանավոր ավանդույթը ժամանակի հոլովոյթում»** (հայ., անգլ.<sup>1</sup> Եր. 2021) հատորները, որոնք պարունակում են ժողովրդական պատմական վկայություններ, բանահյուսական, ազգագրական նյութեր և գիտական ուսումնասիրություններ:

Վ. Սվազյանի **«Պոլսահայոց բանահիստությունը»** աշխատության մասին Փարիզի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի (INALCO) հայագիտության պատասխանատու, դոկտոր **Անահիտ Տոնապետյանը** նշել է. *«Արմավրներով արևմտահայ հեղինակն իր այս աշխատասիրությունը հատուկ նպատակով ներկայացրել է արևմտահայերենով և դասական ուղղագրությամբ, ինչն անչափ կարևոր է Սփյուռքի գաղթօջախների համար և՛ որպես դասագիրք, և՛ որպես ընթերցանության նյութ»*<sup>1</sup>: Սույն աշխատության համար Վ. Սվազյանը սփյուռքում արժանացել է մի շարք պարգևների<sup>2</sup>: **«Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ»** աշխատության համար նույնպես Վ. Սվազյանն արժանացել է բազմաթիվ պարգևների<sup>3</sup>:

Մասնակցելով միջազգային գիտաժողովների՝ Վ. Սվազյանը շարունակել է գրի առնել նաև արտերկրում բնակվող (Հունաստան, Ռուսաստան, Ֆրանսիա, Իտալիա, Գերմանիա, Ավստրիա, Հոլանդիա, Կանադա, ԱՄՆ, Եգիպտոս, Լիբանան, Սիրիա-Դեյր-էզ-Զոր, Թուրքիա) ականատես վերապրողների հուշերը՝ ամենուրեք որոնել-գտնելով արդեն իսկ անհետացող այդ վկաներին, գրի առնելով ու կորստից փրկելով նրանց տեսածն ու զգացածը, նրանց հոգևոր ու մշակութային ժառանգությունը:

Նեղ մասնագիտական շրջանակից դուրս քչերը գիտեն, որ Վ. Սվազյանը զբաղվել է նաև բանահյուսական այլ ժանրերի ուսումնասիրությամբ: Բանագետ Արտաշես Նազինյանի հետ նա աշխատել է ակադեմիկոս Հովսեփ Օրբելու գլխավոր խմբագրությամբ հրատարակվող **«Հայ ժողովրդական հեքիաթներ»** գիտական բազմահատորյակի մի քանի հատորների վրա, որոնք այդ ժամանակ արդեն լույս էին տեսնում բանագետ Արտաշես Նազինյանի գլխավոր խմբագրությամբ: Մասնավորապես, Ա. Նազինյանը և Վ. Սվազյանը կազմել են 6-րդ հատորը, իսկ այնուհետև՝ Վ. Սվազյանը միայնակ՝ 12-րդ և 15-րդ հատորները. սրանցից առաջինը նվիրված է **Արցախ-Ուտիքի** (Եր., 1973), երկրորդը՝ **Տարոն-Տուրուբերանի** (Եր., 1984), իսկ վերջինը՝ **Վան-Վասպուրականի** (Եր., 1998) հեքիաթներին: Հատորների կազմման աշխատանքը ներառում էր ոչ միայն արխիվներում սփռված բնագրերի հավաքումն ու վերծանումը, այլև ծանոթագրու-

<sup>1</sup> Տոնապետյան Անահիտ, Վերծինե Սվազյան. Պոլսահայոց բանահիստությունը, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2000, 592 էջ, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2001, N 3 (158), էջ 290-291:

<sup>2</sup> Փարիզի «Արարատ» հայագիտական ակադեմիան նրան շնորհել է «Պրոֆեսորի» կոչում (2004), Մոնրեալում Պոլսահայ մշակութային միությունը՝ «Ոսկե հուշամեդալ» (2005), Սիրիայում ՀԲԸՄ Հայեպի մասնաճյուղը՝ «Մեսրոպ Մաշտոց» մեդալ (2005), իսկ Ալեքսանդրիայի Հայոց քաղաքական ժողովը՝ «Նեղոսի բանալի» Ոսկե հուշամեդալ (2006):

<sup>3</sup> ՀՀ ԳԱԱ նախագահության «Պատվոգիր» (2000), Սփյուռքի Թեքեյան մշակութային միության «Հայկաշէն Ուզունեան» գիտական-բանասիրական մրցանակ (2002), ինչպես նաև՝ ՀՀ ԳԱԱ նախագահության և «Ծջմարիտները հայերի համար» միջազգային կոմիտեի «Ֆրիդլոֆ Նանսեն» հուշամեդալ (2003):

թյուններ, բարբառային բառամթերքի բառարան ու անվանացանկեր կազմելու աշխատատար տեխնիկական գործընթացը, ինչպես և հատորների նախաբանների շարադրումը:

Բանագետ Վերժինե Սվազլյանի աշխատանքների մասին Հայաստանում և արտերկրում լույս են տեսել բազմաթիվ գրախոսականներ, հանրագիտարանային և այլ հոդվածներ, ինչպես նաև նկարահանվել է ֆիլմ՝ **«Սվազլյան գերդաստանի հավատամքը»** խորագրով (ռեժիսոր՝ Լաուրա Մինասյան, 2009): Այն նվիրված է XX դարի ընթացքում Սվազլյան գերդաստանի երեք սերունդների ազգանպաստ և հայրենանպաստ գործունեությանը՝ ներառելով հայ ժողովրդի համար բախտորոշ հարյուրամյա մի ժամանակաշրջան:

Գիտական գործունեությանը զուգահեռ՝ Վ. Սվազլյանն աչքի է ընկել նաև հանրային դաշտում: 1960 թվականից արտահաստիքային ռեֆերենտի պարտականությամբ նա ընդգրկվել է Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերության (ԱՕԿՍ) աշխատանքների մեջ: 1964-1991 թթ. Վ. Սվազլյանը մասնակցել է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի աշխատանքներին՝ ընտրվելով Հայաստանի և Սփյուռքի համահայկական կանանց խորհրդի անդամ: 1987 թ. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատակիցները նրան ընտրել են հիմնարկի Կինխորհրդի նախագահ: Վ. Սվազլյանը բարեխղճորեն ու նվիրվածությամբ կատարել է իր վրա դրված պարտականությունները: Բարեգործական ավանդույթներ ունեցող ընտանիքում ծնված ու մեծացած հայրենադարձ գիտնականի ուշադրությունից չեն վրիպել նաև Երևան քաղաքում օգնության և հոգատարության կարոտ մանկատներն ու ծերանոցները. Նոր Տարվա նախօրեին Կինխորհրդի անդամները ինստիտուտի աշխատակիցներից հանգանակած գումարներով գնել են սնունդ ու Ամանորի նվերներ և, այցելելով, բաշխել դրանք: 1988 թ. ավերիչ երկրաշարժի օրերին ինստիտուտի հասցեով Գերմանիայի Համբուրգ քաղաքի դպրոցներից ուղարկված օգնությունը, նաև ինստիտուտի գիտաշխատողներից հավաքված գումարն ու աշխատակցուհիների պատրաստած թխվածքները, խմբով տարել հասցրել են Երևանի հիվանդանոցներում բուժվող մեծ ու փոքր աղետյալներին:

Իր կոչմանն ու անձնուրաց աշխատանքին Վ. Սվազլյանը միշտ վերաբերվել է մեծ պատասխանատվությամբ և բժախնդրությամբ, մշտապես մեծ հարգանք է տածել ինչպես իր ուսուցիչների, այնպես էլ տարեկից և երիտասարդ գործընկերների հանդեպ: Բնականաբար, փոխադարձորեն ստացել է նույն ակնածանքն ու սերը թե՛ գիտական համայնքում և թե՛ իր աշխատանքներով հետաքրքրված ընթերցասերների լայն շրջանակներում: Վ. Սվազլյանի աշխատասիրությունն ու նպատակասլացությունը վառ օրինակ են երիտասարդ գիտաշխատողների համար:

Ջերմագին շնորհավորում ենք մեր վաստակաշատ բանագետ-բանահավաք Վերժինե Սվազյանին իր ծննդյան 90-ամյա հոբելյանի առթիվ՝ մաղթելով արևշատություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ:

**ՏՈՐԲ ԴԱԼԱԼՅԱՆ**

torqdal@yahoo.com

**Հ.Գ.** Ճշմարիտ հայուհի և իր երկրի նվիրյալ քաղաքացի Վերժինե Սվազյանը «Լրաբերի» վաղեմի բարեկամն ու գերապատիվ հեղինակն է: Վ. Սվազյանի մարդկային հմայքը, մտքի եռանդը, կյանքի ու ժամանակների հանդեպ չհատնող հեղափոխությունը տարիների հորձանույրում չնվազեցին և մինչ օրս ուղղորդում են նրան:

Գիտնականի ապրած կյանքը արտացոլումն է նրա սկզբունքայնության, մարդկային իդեալներին հավատարմության և Բարուն ու Արդարությանը ծառայելու ինքնաբերական միտումի:

«Լրաբերի» անձնակազմը ջերմորեն շնորհավորում է վաստակաշատ բանագետին՝ արժանավոր հոբելյանի առթիվ:

**ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» խմբագրություն**